

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

## ՀՈԳԵՎՈՐ ԿԱԳԵՐԻ ԲԱՎԻՂՆԵՐՈՒՄ

19-րդ դարի երկրորդ կեսից վրաց գրական քննադատական միտքը պարբերաբար անդրադառնում է հայ դասական և ժամանակակից գրականության անվանի ներկայացուցիչների կյանքին ու գործունեությանը: Վրացի գրողները, գրականագետները, արվեստի ու գրականության գործիչները տասնյակ տեսական-քննադատական հոդվածներ, ուսումնասիրություններ, գրախոսություններ, ակնարկներ, դիմանկարներ և հրապարակախոսական ելույթներ են ծառանգություն թողել մեր մեծերի մասին: Դրանց անկապտելի մասն են հուշապատմները, որոնք կա՛մ անմատչելի են հաշ հանրությանը, կա՛մ էլ ծանոթ են սուկ ծաղկաքաղ պատատիկներով: Մինչդեռ մեր գրականության համար հետաքրքիր, օգտակար և անհրաժեշտ այդ նյութերում լուսաբանվում են գրողների մարդկային հարաբերությունները, իմաստավորվում են առանձին երևույթներ, հաճախ էլ տրվում է իրադարձությունների անաչառ գնահատականը: Դրանց հիման վրա պատկերացում ենք կազմում վրաց գրականագիտական մտքի՝ հայ գրականությունն ու նրա մշակներից արժեքավորելու ուղղվածության և միտումների վերաբերյալ:

Մեծ թիվ են կազմում հատկապես Հովհաննես Թումանյանի մասին հուշերը, որոնց մեջ քիչ չեն այն դրվագները, որոնք կարող են լրացնել մեծ բանաստեղծի կենսագրությանն առնչվող առանձին էջեր կամ պարզա-

պես հարատացնել նրա՝ ազգային, հասարակական և հրապարակախոսական գործունեության մասին մեր պատկերացումները:

Մեր հանդեսի ընթերցողներին ներկայացվող Իոսեք Իմեդաշվիլու այս հուշապատմը՝ «Առաջին հանդիպում», «Խմբագրատանը», «Մետեխի բանտում» (Քազիվ մեկ երրորդը), «Գրողների մոտ» և «Ժողովուրդների բարեկամությունը» հատվածները տպագրվել են «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի մեջ (Երևան, 1980, էջ 586—591), իսկ «Ո՛ւմ եմ հիշում», «Տիգրան Նազարյանի սպրնում», «Սայաթ-Նովայի հուշարձանը», «Բարեկամ բանաստեղծ ենք ունեցել, իսկ ես՝ անտեղյակ», «Վե՞հագնիվ մարդկայություն», «Անթալի և ցավալի», «Մետեխի բանտում» գլուխներն ամբողջությամբ, որոնք պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում, տպագրվում են առաջին անգամ և առանց կրճատումների կամ միջամերության:

Արվեստագետ և հասարակական գործիչ Իոսեք Իմեդաշվիլու (1876—1952) հուշապատմի [«Վարդի թերթեր» (Շենասձը, զգացածը, խորհածը)] տասնմեկ գլխից և քսանհինգ էջից բաղկացած պատճենահամ բնագիրը մեզ է տրամադրել հեղինակի որդին՝ պրոֆ. Գ. Իմեդաշվիլին, որին և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Հ. Ս. ԲԱՅՐԱՄՅԱՆ

### ԻՈՍԵՔ ԻՄԵԴԱՇՎԻԼԻ

#### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԻՄ ՀՈՒԾԸ

«Վարդի թերթերից»  
(տեսածը, զգացածը, խորհածը)

#### ՈՒՄ ԵՄ ՀԻՇՈՒՄ

Երբ մտաբերում եմ Հովհաննես Թումանյանին, անմիջապես հիշում եմ երկնամբարձ ժայռի գլխին բուսած հեքիաթային բուրումնավետ ոսկե խնձորենին, որին ամպրոպ-որտը, կայծակ-շանթը, տապ-տոթը, բուր-

բորանը որքան էլ հողմահարում են, ճյուղերը կտրտում, այդուհանդերձ, զա ամուր կանգնած է ժայռի կատարին, արմատներով մըխըրճված ընդերքի մեջ, և ձմեռ թե ամառ, գարուն թե աշուն իր անմահական պտղով անցնող-դարձողներին, աշխարհի որ անկյունից էլ նրանք լինեն, ջերմացնում է, կենսական նոր ուժ հաղորդում և արագացնում նրանց պացքը դեպի արևային երկիր:

Հիշում եմ այս գեղեցիկ հեքիաթը՝ ամենքի համար, ամեն ինչով միշտ օգտակար պտղատու ծառի մասին, և մտաբերում թանկագին բարեկամիս՝ Հովհաննես Թումանյանի լուսեղեն պատկերը...

Սևեռուն նայում եմ, քայք, այդուհանդերձ,

Գրկարանում էմ գրել Գրա մասին...  
Հովհաննես Թումանյան...

Արևի առաջին ճառագայթ, վաղորդյան  
թարմաշունչ այտը, վաղ զարնանը ձնծաղկի  
արթնացում, մանուշակի ծափոտ. ինձ համար  
ամա թե ով է Հովհաննես Թումանյանը...

**ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԱՆՈՒՄԻՆ**

Թիֆլիսում, Ռուսթավելու պողոտայում  
(Ճախկինում՝ Գոլովինսկի պողոտա), «Զար-  
յա Վոստոկա» թերթի ներկայիս խմբագրու-  
թյան դեմոդեմ այժմ էլ վեր է հառնում եռա-  
հարկ մի շենք՝ № 4, ժամանակին համընդ-  
հանուր ուշադրություն գրավող վեհաշուք մի  
կառույց, որի վերին հարկում բնակվում էր  
դարաբաղցի հայերից ճշգրտորեն ժուռնալիստ  
գործիչներից մեկը: Դա անխոնջ, միշտ բա-  
րեկիրթ, եվրոպական նիստուկացով մարդ էր,  
որ գրականության բնագավառում աշխատե-  
լուց բացի հուշակված էր նաև իր սալոնի ուր-  
բաթօրյա երեկույթներով: Յուրաքանչյուր ուր-  
բաթ երեկո այստեղ էին հավաքվում թիֆ-  
լիսաբնակ բոլոր ազգությունների, առավելա-  
կան վրացի և հայ առաջադեմ մտավորա-  
կաններ՝ գրողներ, դերասաններ կամ ան  
բնագավառի գործիչներ: Այս կամ այն ան-  
հատին նվիրված երեկոն ընթացում էր ժո-  
ղովուրդների միջև համերաշխության և սեր  
հաստատելու նշանաբանով: Օրինակ՝ այստեղ  
կազմակերպվեցին Նիկոլոզ Բարաթաշվիլուն,  
Կոտե Մեսխիուն, ինչպես նաև թուրք և ռուս  
գործիչների գործունեությանը նվիրված երե-  
կոներ:

Նշանակված օրը, երեկոյան ժամը յոթից  
ուրբ, սպնդամատին ծախուն կանգնած, եվ-  
րոպական հագուստով, ներմակ թևածալերով  
դու օձիքով, սափրված երեսով Տիգրան Նա-  
զարյանը բոլոր այցելուներին դիմավորում էր  
վերայի և ձեռքսեղմունով: Նման ամեն երե-  
կույթի հավաքվում էին երեսուն-քառասուն  
պղամարդ և կին (կանայք՝ երկու-երեք հո-  
գին): Ավելի հաճախ կազմակերպվում էր գրա-  
կան երեկո, որ վերջանում էր թելի, մրգի  
և քաղցրավենիքի հյուրասիրությամբ:

Առաջներում Վրաստանի հայերը, շատ ան-  
ճշան բացառությամբ, միշտ վրաց ժողովրդի  
ճավատարիմ՝ եղբայրներն են եղել. Գրանց  
վրացիներից չէր տարբերի: Ժառանգ ար-  
յունակից ազգականներ էին: Այս միասնու-  
թյունը գնահատում և հատկապես Վրաստա-  
նին երգեր էին ձոնում հայագգի աշուղներ  
ու գուսաններ, ինչպես՝ Սայաթ-Նովան, Հա-  
զիբը և ուրիշներ:

Աշուղ Հազիբը (ճույն ինքը՝ Արրահան  
Գալթի Արրահանյանը, հոր կողմից՝ շուլա-  
վեթի շինվարան, առտի կողմից՝ զարեշեցի  
վրացի) միշտ երգում էր.

Վեր կաց, բարձրացի՛ր,  
Թագուհի Թամար,

Ողջ Վրաստանն է  
Ողբում քեզ համար:

Կամ՝

Արի՛, որդի, ինձ մոտ արի  
Ու սիրես մի սրահարի:  
Վրաստանի զավակն ես դու,  
Մանաշիր քո երկիրն արի:

Նույն ժամանակում արտասահմանից, հյու-  
սիսից և հարավից որոշ ազգայնամուղներ թու-  
նավորում էին վաղուց անտի հաստատված  
հայ-վրացական եղբայրություն-միասնությունը:  
Հենց այդպիսի ժամանակ էլ անհրաժեշտ էր  
համերաշխության, եղբայրության, միասնու-  
թյան զգացումներ բուսավառող մի քուրա...

Նման քուրաներից մեկն էլ առաջներում  
Տիգրան Նազարյանի սալոնն էր, այնուհետև՝  
Հովհաննես Թումանյանի օջախը...

**ԱՌԱՋԻՆ ՀԱՆԻԳՈՒՄԸ**

Ինձ հարյուրական թվականներին Տիգրան  
Նազարյանի սալոնում սովորական մի երե-  
կոյի ժամանակ համերաշխության, ավելի  
շուտ՝ հայ-վրացական եղբայրության անհրա-  
ժեշտության մասին հակիրճ խոսք առացի:  
Խոսքս վերջացնելուն պես ինձ մոտեցավ վա-  
յելչակազմ, գրեթե բարձրահասակ, սևաթղ-  
սևամորուս, մոտավորապես երեսուն-երեսուն  
հինգ տարեկան մի մարդ: Նա ձեռքս ամուր  
սեղմեց, փաթաթվեց ինձ, և մե՛նք համբուր-  
վեցինք:

Այդ մարդն իր յուրահատուկ արտաքինով  
թեև առաջ էլ գրավել էր իմ ուշադրությունը,  
հատկապես՝ հրապուրել առաքինի տեսքով,  
բայց մեկմեկու չէինք ճանաչում: Առաջին իսկ  
հանդիպումից ես այնպիսի զգացում ունեցա,  
ասես նա իմ հարազատը լիներ, երկար տա-  
րիների բարեկամը:

— Մե՛նք հո նույն երկրի զավակներ ենք,  
հնուց անտի եղբայրներ, ի՛նչ ունենք բաժա-  
նելու, մեր երկպառակությանը ինչո՞ւ ենք  
ուրախացնում թշնամուն... Դուք ճիշտ ասա-  
ցիք՝ կգա ժամանակ, և հայերի ու վրացիների  
մեջ անհաճո միջադեպներ ընդմիշտ կվերա-  
նան... Ո՛ւմ է պետք գծությունը: Երկնքի  
ներքո, բնությանը առատորեն զարդարված  
այս հող ու ջրի վրա ապրի՛ր ու աշխատի՛ր...  
Աշխատի՛ր ու ապրի՛ր... Նաև՝ ապրեցրու:  
Այո՛, մե՛նք բոլորս պարտավոր ենք մերձե-  
նալ միմյանց, պարտավոր ենք իրար հասկա-  
նալու միջոցներ ձեռնարկել...

Ջրուցում էր քաղցր, հմայիչ ձայնով՝ ան-  
կունում կանգածիս հետ: Վերջում բացա-  
կանչեց.

— Մե՛ծ հաճույք պատճառած կլինեք, եթե  
այցի զաք մեր տուն... Բնակվում եմ Ամաղ-  
լեբա փողոցի համար տասնութում:

Հրավերի համար շնորհակալություն հայտնեցի:

Պարզվեց, որ այդ մարդը Հովհաննես Թումանյանն է:

Այդ օրվանից ցա հոգուս մեջ մնաց իբրև արեգակի ճառագայթ. թեև չէի կարողանում հաճախակի այցի գնալ նրան, բայց, այդուհանդերձ, իմ սրտում կրում էի նրա լուսեղեն ակտիվները:

Մի քանի անգամ գնացի նրա սուն: Նրա օջախը մի տեսակ սայրանաման հավաքատեղի էր. այստեղ հաճախ հավաքվում էին նաև վրացի գրողներ ու հասարակական գործիչներ:

Նշանակված ժամին անպայման կոչմամբներ սանդուղքի գլխին, առաջդ դուռը կբացեր և մինչև մուտքն էլ կուղեկցեր\* ցուցաբերելով մեծագույն հարգանք ու սրտաբացություն:

Ինձ հիացնում էին նրա աներևակայելի բարեկրթությունը, նրբանկատությունը, սրբաբանույ ճյուղակալությունը: Նրա ամեն խոսքից, ամեն քայլից, ամեն հայացքից ասես կոպա անապական մեղր էր ծորում: Չէիք պատկերացնի, որ ցա ներկայացուցիչն է այն ազգի, որի հզոր խավերից մեկին սաստկորեն այապանեցին Գարրիել Սունդուկյանն ու Ծիրվանզադեն, նաև՝ ուրիշներ:

Այդ երկու տարբեր բանակներն իրարից հեռու էին այնքան, որքան հեռու են երկինքն ու երկիրը:

Մարդիկ կան, որոնց հետ եթե հազար անգամ ծանոթացնեն, հազար անգամ էլ կմոռանաս, բայց կան և այնպիսի մարդիկ, որոնց եթե մեկ անգամ տեսնեք՝ ընդմիշտ կմնան ձեր սրտում՝ ինչպես սեփական միս ու արյուն: Միշտ այդպիսի մարդ էր Հովհաննես Թումանյանը: Նա որքան մեծատաղանթի քանաստեղծ էր, այնքան էլ մեծ քաղաքացի էր, այնքան էլ լայն ստահորիզոնի տեր գործիչ էր:

### ԽՄԱՆԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1910 թվականի աշնանն էր:

Այն ժամանակվա գրողներն ու գործիչները հաճախ էին գալիս իմ խմբագրություն («Թեատրի դա ցխովրեբա»\*, վրացական թատրոնի իջակցք): Նայեմ տեսնեմ՝ մի օր Հովհաննեսը ծպտալով ներս մտավ:

— Սիրելի բարեկամ\*\*, էդպես չի լինի,— առաց կատակով,— ես ձեզ ին՝ ո՛վ եմ նեղացրել, որ գոնե մի անգամ ինձ չեք այցելում... Դուք արդեն ամառափր ունեք՝ արվեստի և գրականության ամսագիր: Դա շատ լավ գործ է... Խնդրում եմ՝ ժամանակ գտեք և անցեք ինձ մոտ. գուցե միասին գրուցենք

\* «Թեատրի դա ցխովրեբա» — «Թատրոն և կյանք» (վրաց.):

\*\* Բնագրում այս խոսքը հայերեն է (ծ. թ.):

և մեր համերաշխությամբ մասին նյութեր աղպագրենք:

— Մեծագույն հաճույքով, թանկագին Հովհաննես. մեծագույն հաճույքով: Կանցնեմ ձեզ մոտ, կաշխատեմ գալ:

— Ոչ թե կաշխատեմ, այլ անպայման... Ժամանակը չի սպասում...

— Ի՞նչ անեմ. բոլորովին ժամանակ չեմ ունենում: Խմբագրության ամբողջ գործը միայն իմ ուսերին է ընկած: Ներկա պահին էլ Գարրիել Սունդուկյանի պիեսն եմ թարգմանում:

— Ո՞րը:

— «Սեր և ազատությունը»:

— Օ՛, — օ, դա շատ լավ է, բայց ինձ համար էլ պիտի ժամանակ գտնեք: Չէ, ոչ թե ինձ համար, այլ մեր ընդհանուր գործի համար... Իսկ ընդհանուր գործը միացյալ ուժերով է արվում, թե չէ ժողովրդի թշնամիները քնած չեն, հայրենի երկնքում սև ափեր են կուտակվում...

— Կաշխատեմ անցնել...

### ՄԵՏԵԽԻ ԲԱՆՏՈՒՄ

Հովհաննեսն ինձ հրաժեշտ տվեց և՛ երկար ժամանակով: Այդ օրերին ինձ Մետեխի բանուցետեցին. այնտեղ իրար գլխի էին հավաքել ժամանակի հեղափոխական, հասարակական և գրական աշխարհի սերուցքին:

Վրիժառու Նիկոլայ Երկրորդի կառավարությունը օր ու գիշեր տենդորեն աշխատում էր. ո՛չ կախաղանի օճառած պարանն էր կտրվում, ո՛չ էլ Սիբիրը կամ տաժաճակրությունն էին ժողովրդի հավատարիմ զավակների ոսկորներով հագնանում:

Մի առավոտ լուր տարածվեց, թե հայոց քանաստեղծ Հովհաննես Թումանյանին էլ բերին:

Սիրտս սկսեց արագ-արագ խփել. կարոտել էի Հովհաննեսին...

Բանտի բակում զբոսնելիս հանկարծ մոխրագույն հագուստով մի տղամարդ փաթեթովեց ինձ: Նայեցի տեսա՝ առջևս Հովհաննեսն է կանգնած:

— Եվ դո՛ւք, բարեկամ,— զարմացած հարցրի ես:

— Պատուհանից ձեզ տեսա, սիրտս չհամբերեց,— սասց նա:

Հարցուփորձ արինք միմյանցից:

Կեսօրվա զբոսանքի ժամանակ նույնպես համարյա միշտ ինձ և վրացի մյուս կուլանավորների հետ էր լինում: Թեև երկուսս էլ բանտի միևնույն քաղաքական բաժանմունքի, այսպես կոչված, «Հին շեճքուս» էինք նրստած, բայց գտնվում էինք առանձին-առանձին մենայեցներում և մեկմեկու հանդիպում էինք միայն լվացվելու և կեսօրվա քսան րոպե տևող զբոսանքի ժամանակ...

Ո՛վ ցավի մեջ ընկած ժամանակ հոգու որբություն և բարեկամի հետ հանդիպելու տենե-

չափք չի գգացել, թա չի կարող պատկերաց-  
նել միմյանց հանդեպ ցուցաբերած մեր քընք-  
շանքը...

Մեր խոսքուզրույցի թեման համարյա միշտ  
նույնն էր՝ գրականություն, արվեստ. գրակա-  
նության միջոցով ազգերի (հատկապես՝ հա-  
յերի ու վրացիների) միջև համերաշխության  
հաստատում: Նա չափազանց շատ էր հա-  
վատում գրականության և իսկական գրողի,  
առանձնապես՝ բանաստեղծի խոսքին...

— Ո՞ր թագավորը կամ ածախա հերոսը  
քարոզ է համեմատվել Օթթա Ռուսթավելուն,  
Ֆիլոլոզ Բարաթաշվիլուն, Ակակի Ծերեթե-  
լուն, Իլիա Մավճավաձեին...

— Այդ խմբին ավելանում է նաև ձեռ ա-  
ճունը...

— Ի՞նչ... Ի՞նչ եք ասում. Օթթայի հետ  
ո՞վ կշափվի:

— Համեմատական կարգով եմ ասում: Ձեզ  
ձեռան՝ իբրև բանաստեղծ, հայերը ո՞վ ունեն:

— Ունեն և ավելի լավը,— պատասխանեց  
Ժպիտով,— Իսահակյանն ավելի մեծ բանաս-  
տեղծ է:

— Իսահակյան՝

— Այո՛, խոսքարվեստի վարպետ է, մեծ  
Ռույզերի երգիչ... Բայց և այնպես վրացի  
բանաստեղծներն էլ քարծր են կանգնած...  
Վրաստանը Ռո բանաստեղծների երկիր է...

— Առհասարակ՝ Հայաստանը գործնական,  
կյանքում ավելի գործունյա երկիր է... Ժիշտ  
է՛՝ քաղմատանը, քայց և այնպես մեծ ազգ եք:

— Ինչո՞վ,— սևեռուն ինձ նայելով՝ հարց-  
րեց Հովհաննեսը:

Բանտի բակում, ինչպես կայստեղում լրծ-  
ված եզներ (զույգ-զույգ շարք կանգած, մոտ  
վաթսուհ կայանավոր). լռելյայն մի քանի  
քայլ արեցինք: Ես խորասուզվեցի մտքերիս  
մեջ. իսկապես՝ ինչո՞վ: Հիշեցի ինձ ծանոթ  
մի հայի՝ Մատիկյանի հետ նախօրյակին ու-  
նեցած զրույցը. «Ռուսիկանությունը որքան  
էլ հետապնդի մեզ, ոչինչ չի կարող անել,  
ոչինչ չի կարող պակասեցնել... Միայն մեր  
կուսակցական դրամարկդում հիճգ միլիոն ու-  
կի ունենք...»:

— Ինչո՞վ,— վերստին հարցրեց Հովհան-  
նեսը:

— Նրանով, որ, նախ՝ հայերիդ կուսակ-  
ցությունը դրամարկդում հիճգ միլիոն ուկի  
ունի, և դա այն ժամանակ, երբ մեր հեղա-  
փոխակաները, կարծես, քոռ կոպեկ անգամ  
չունեն, երկրորդ՝ մեր հեղափոխականները  
քաժանված են մի քանի հոսանքի, միջոցեռ  
հայերը, կթե չե՞ միավրում, հիմնականում  
մեկ դրոշի տակ են միավորված:— Հովհան-  
նեսը նայեց ինձ:— Ես ասացի՝ հնչակյան-  
ները և մյուսները հաշվի մեջ չեն: Երրորդ՝  
եթե մեր երկրի առաջավոր դասը՝ ազնվակա-  
նությունը, գյուղացիների քրտինքով ողողված  
հայրենաստանագ կայվածքները քեֆերում  
վաւոնում է, քանկերում գրավ դնում, քամուհ  
ւալիս, տպա հայի ունեոր հատվածը կալ-

վածքներ, հող ու ջուր է ձեռք բերում, կա-  
ռուցում է, հարստանում, ոսկի կուտակում:

— Տարօրինակ է, որ նման բան եք աս-  
ում,— հակաճանեց Հովհաննեսը,— ո՞ւմ է  
պետք ոսկու պարլը՝ նյութական հարստու-  
թյունը. դու ինձ հոգի ցույց տուր, հոգի...  
Ի՞նչ արծի հենց այն, որ վրացիներն առայսօր  
պահպանել են ասպետականությունը... ա-  
պետի բարձր ոգին... Միջոցեռ քո ասած այդ  
ոսկին ստրկացրել է մարդուն, սիրտն սպա-  
նել և դարձրել չոր ծառ... Պեզիան, նրա  
զգացողությունը կորել է... Ոսկի՛... Ի՞նչ է  
ոսկին վեսն հոգու համեմատ: Ի՞նչ արծի  
հենց միայն այն, որ վրացիներդ Օթթա ու-  
նենք...

— Օթթա՛... Ո՞վ է կարդում:

— Կգա ծամանակ և ամբողջ երկիրը, տար-  
բեր ազգեր կչերմանան նրա պոեմով, նրա-  
նով կհասկանան՝ ինչ է գեղեցկություն, հե-  
րոսություն, սեր, սխրանք... Նրանով կհաս-  
կանան, թե ինչպիսին պետք է լինի ազգերի  
եղբայրությունը, թե հանուն ում և ինչի պի-  
տի պայքարի մարդը, ում դեմ...

— Էս ինչքա՛ն հեռու գնացինք, քարեկա-  
մքս, Հովհաննես:

— Ասում եմ՝ այսպես կլինի, սիրելի քա-  
րեկամ, Հովսեփ՝

Մեզանից ո՞վ էր ճշմարիտը, գուցե եր-  
կուս է սխալվո՞ւմ էինք:

Այս հարցերի մեկնաբանությունն ու գնա-  
հատականը իմ գործը չէ...

Բայց հաջորդ օրը մեր զրույցը շարունա-  
կեցինք, և, ի միջի այլոց, ասացի, որ այսու-  
հետ կապիտալը պետք է իշխի. ո՞վ փող,  
դրամագլուխ ունի, նա էլ կդառնա երկրի  
կարգադիրը... Կապիտալը սուկ երկրագնդի  
մակերևույթով չի բավարարվում: Նա մըտ-  
նում է նաև երկրի ընդերքը, հանքահորեր է  
փորում, զարգացնում է արդյունաբերությու-  
նը... Սրա ակունքը, ինչպես գիտեք, կապի-  
տալն է, իսկ կապիտալ մեզանում հայերն  
ունեն, ավելի ստույգ՝ հայ մեծահարուստնե-  
րը: Ա՛յ, հենց սրանք են աշխատավորների  
մի նոր տիպ ստեղծում: Աշխատավոր մարդ-  
կանց ուղարկում են հողի սրտից ոսկի, ար-  
ծաթ, ածուխ և հազար ու մի հարստություն  
դուրս բերելու...

— Ջարմանայի քաներ՝ ես ասում... Մարդ-  
կանց ողջ-ողջ պիտի գերեզման իջեցնեն, իսկ  
դուք դրա մեջ երջանկություն եք տեսնում...  
Մարդկանց դեպի բնություն, դեպի արևի ճա-  
ռագայթները պիտի տանեն, մաքուր օդ, ան-  
տատ և ծաղիկների մեջ պիտի տանեն, և սա-  
ր է երջանկությունը: Չէ՛, մարդուն նորից բնու-  
թյան գիրկը տարեք, արևով ուրախացրեք,  
վարդ-ծաղիկներով (ջերմանան, գոսության ու  
խավարի մեջ մի՛ խեղդեք), ամենուր և ամեն  
ինչում պոեզիային մերձեցրեք...

\* Բնագրում այս խոսքերը նույնպես հայե-  
ջոց ըղվ:

Մեր այս համդիպումները կայացել են, եթե չեն սխալվում, 1911 թվականին: Հովհաննեսը երկար շննաց Մետեխի բանտում:

### ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Բանտից դուրս գալուց հետո նոր էի սկը-  
նք «Թեատրի դա ցխովոբա» ամսագրի հրա-  
տարակությունը (կնոջս անունով, որովհե-  
տև ես գրկված էի իրավունքից), երբ լսեցի,  
որ հայ գրողների ընկերության ղեկավարու-  
թյամբ տեղի է ունենալու Սայաթ-Նովայի  
հուշարձանն օծելու արարողությունը: Օծմանը  
ներկա գտնվել ցանկացողները կարող էին  
գալ՝ իրենց հետ ունենալով մեկական վարդ:  
Հուշարձանն օծելու օր էր նշանակված  
1914 թվականի մայիսի 15-ը:

Վաղ առավոտից սկսվեց ժողովրդի հոսքը  
դեպի Հայ բարեգործական ընկերության շեն-  
քը (Արաս-Արադի հրապարակ, որտեղ տե-  
ղավորված էր հայ գրողների կազմակերպու-  
թյունը՝ Հովհաննես Թումանյանի նախագա-  
հությամբ):

Թիֆլիսի արհեստավորների համաքարություն-  
ները՝ դրոշներով, մտավորականության սե-  
րուցքը, գրողները, աշխատավորական ցածր  
խավերը Արաս-Արադի հրապարակից մինչև  
Սուրբ Գևորգ եկեղեցու բակը, որտեղ Սայաթ-  
Նովայի հուշարձանի օծումը պիտի կայանար,  
կենդանի շղթա էին կապել: Նրանցից յուրա-  
քանչյուրը ձեռքում մի վարդ էր բռնել:

Պետք էր տեսնել այդ գեղեցիկ տեսարա-  
նը՝ մեծ ու փոքր՝ մեկական վարդով:

Մով ժողովուրդը չտեղավորվելով բակում՝  
բռնել էր նրա շրջակայքը: Հազիվ կարողա-  
ցա անցնել մարդկանց խիտ պատի միջով:

Խոսքը տանք այն ժամանակվա «Թեմի»  
թերթին:

«Մեծաքանակ ժողովուրդ էր ամբոխվել ե-  
կեղեցու բակում: Ներկա էին նաև վրացա-  
կան մամուլի ներկայացուցիչները: Բազմա-  
թիվ ելույթներ եղան: Առաջինը խոսք սուսաց  
Հայ գրողների ընկերության նախագահ, նը-  
շանավոր բանաստեղծ Հովհաննես Թուման-  
յանը, որը հանգուցյալ Սայաթ-Նովային հի-  
շատակեց իբրև ժողովրդական երգչի, որը  
երգել է հայերեն, վրացերեն և թուրքերեն:  
Նա իջեցրեց հուշարձանի պատտառը. այն  
ծածկված էր ծաղիկներով ու դրասանգե-  
րով...»:

Այնուհետև.

«Ժողովուրդը մեծ խանդավառությամբ ըն-  
դունեց երգիչ Հազիրի հայերեն բանաստեղ-  
ծությունը՝ նվիրված Սայաթ-Նովայի հիշա-  
տակին, ինչպես նաև մի վրացի երգչու (ժո-  
ղովուրդը նրան «Վանիչկա» է ասում) ոտա-  
նավորը: Իրենց ելույթներով մեծ ազդեցու-  
թյուն թողեցին ժողովրդական համալսարանի  
ներկայացուցիչ Ս. Երմոլանը և վրաց դրա-  
մատիկական ընկերության ներկայացուցիչ  
Իսաբ Իմեդաջվիլին: Հին Թիֆլիսի մոջալաք-

ների հագուստներով երաժիշտները կանգնե-  
ցին հուշարձանի մոտ և սկսեցին երգել Սա-  
յաթ-Նովայի երգերը»:

Եվ այլև:

Հուշարձանն օծելու արարողությունը ազ-  
գային-ժողովրդական մշակույթի իսկական  
տոնահանդես էր, որ փառահեղ տպավորու-  
թյուն թողեց իր պարզությամբ և անմիջա-  
կանությամբ:

Նրա կազմակերպիչը, ոգին ու սիրտը Հով-  
հաննես Թումանյանն էր:

Ի՞նչ պայմաններում և ի՞նչ նպատակով ես  
խոսք ասացի, որը թերթի («Թեմի», 1914,  
№ 179) հավաստմամբ «մեծ ազդեցություն  
թողեց»:

Հանդեսն ավարտվում էր:

Կողմ էրիսթապիին (վրաց դրամատիկական  
ընկերության նախագահը) և բանաստեղծ  
Կոտե Մաղաշվիլին նայեցին ինձ, թե՛ մի բան  
պետք է ասես... Ես, իբրև բանտից նոր դուրս  
եկած, նախկին քաղբանտարկյալ, գրեթե ան-  
լեզու, հսկողության տակ գտնվող (ինչպես  
հետագայում պարզվեց, օրվա մեջ երկու  
խուզարկու էին հետևում ինձ), դեռևս զգու-  
շանում էի, որպեսզի կրկին ցանցի մեջ չընկ-  
նեմ, բայց այն ժամանակ հանդեսն այնպես  
կանեց ինձ, որ բարձրացա աթոռին (թե՛  
քարին): Բարձրացա և զինվորական արտա-  
հագուստով մի գնդապետի տեսա, որն զգաստ  
կանգնել էր իմ առջև: Մտքս մեջ իսկույն  
«Ժանդարմի» տեղ դրեցի: Մտածեցի՝ վերջ,  
ցանցն եմ ընկել: Կարծեմ նույնիսկ ընկըր-  
կեցի, որպեսզի անհաճո որևէ բան տեղի չու-  
նենար: Ընչու այդ պահին հայացքս ընկավ  
Հովհաննես Թումանյանի փոքր-ինչ բաց  
շրթունքներին, շողարձակ աչքերին և ժղպ-  
տուն դեմքին, որոքն ասես ոգևորում էին՝  
սկսի՛ր: Ինչ կիցի՛, թող լինի, ասացի ինքս  
ինձ ու սկսեցի: Այդքան ժողովուրդը շունչն  
այնպես էր պահել, որ ճանհի թզոցն ան-  
գամ լսվում էր: Խոսում էի և ժամանակ առ  
ժամանակ նայում և՛ «Ժանդարմին», և՛ Հով-  
հաննես Թումանյանին, որովհետև որքանով  
«Ժանդարմի» կուշտ տեսքից կաշկանդվում էի,  
նույնքան Հովհաննեսի բարձր, պայծառաշուք  
դեմքից թևեր էի առնում, ոգևորվում:

Ի՞նչ ասացի իմ ելույթում: Մտավորապես  
ահա թե ինչ (մեջքերում եմ հատվածներ.  
ավելի ընդարձակը, թեև գրաքննության կող-  
մից կրճատված, «Թեմի» 1914 թ. № 179-  
ում է գետեղված):

«Արևիկի պես փայլիլուն-ցուլարձակող, վար-  
դի նման գեղեցիկ-բուրումնավետ, առավոտ-  
յան պուրի պես նրբորեն կախարդող գուսա-  
նի (Սայաթ-Նովայի) խոսքը մեկ անգամ ևս  
փառավորեց խավարով պատած մեր հոգին,  
լուսավորեց մեր սրտերը և ոգեպնդեց: Ազ-  
գային թշնամանքը, մարդակերությունը, փո-  
խադարձ ատելությունը, գժտությունը ոչինչ  
լավ բան չեն տա...»:

«... Նրա (Սայաթ-Նովայի) համար մեկ էր

վրացի, հայ, թաթար, թե այլազգի, ուստի բոլորի համար սեր էր երգում միանման քաղցր ձայնով, ջերմացնում, վեհացնում, հաճելի, գեղեցիկ ու սիրելի էր դարձնում կյանքը...»:

Այնուհետև՝

«... Մեր ժամանակներում էլ երևան կգուճան մի երգիչ, որը թշնամանքի ու մարդուկերության փոխարեն փոխադարձ սեր կքարոզի»:

«Այսօրվա օրը վկա է, որ նման երգիչ կրկին կծնվի, և գեթ մեկ անգամ մարդուկերության սիրահարները կզգան, որ մեր ժամանակներում միայն փոխադարձ հարգանքը, եղբայրությունն ու սերը կարող են լուսավորել մարդկանց խավարչուհի սրտերը...»:

Ինչ այլն («Թեմի», 1914, 19/5, № 179, էջ 2):

Ամբիոնից իջնելուն պես զինվորականը, որին ես «ժանդարմի» տեղ էի դրել, մի քանի քայլ արեց դեպի ինձ, երկու ձեռքով ամուր սեղմեց ձեռքս և շնորհակալություն ասաց: Մյուս կողմից էլ Հովհաննեսը փաթաթվեց ինձ՝ «Կեցցե՛ս, Իոսեք ջան» ասելով՝ թևանցուկ արեց ու քարձուցրեց այնտեղ, բակի ծայրին կանգնած տան երրորդ հարկ: Դահլիճում երկար սեղան էր բացված, իսկական հեքիաթային սեղան: Օ՛, տեր աստված, ինչ ասես, որ չկար այնտեղ՝ տարատեսակ քաղցրավենիք, թխվածքեղեն, խմիչք, նախաճաշի ուտեստներ...

Հովհաննեսն առաջարկեց պատվավոր մի տեղ՝ ուր նազանի, շքեղորեն զարդարված, վարդ-մանուշակների պես բացված աղջիկներ էին նստոտած, նրանք, նաև իր դուստրերը, շրջապատեցին ինձ, այս ու այն կողմից քաղցրավենիք հյուրասիրեցին, բայց մի՞թե կրուկզմար որևէ բան, մանավանդ, որ այնպե՛ս լցված էի Հովհաննեսի փաղարջանքով ու սիրով, աղջիկների հմայիչ ծայրներով և օրվա փառաճեղ տպավորությամբ, որի մեծ-միակ հեղինակը մեր թանկագին Հովհաննեսն էր...

Ինչ խոսք, որ Հովհաննեսի և նրա յուրախնների՝ իմ նկատմամբ ցուցաբերած այդպիսի ուշադրությունը ես սուս կիմ անձին չէի վերագրում. այդ ամենը, հանձին իմ, ուղղված էր վրաց ժողովրդին...

Այն երանելի զգացողությունը, այն ջերմությունը, որ ես ունեցա այդ օրը, երկար ժամանակ չի հետացել իմ հիշողությունից և այժմ էլ, եթե հիշում եմ, հաճելի մի դող է անցնում ամբողջ մարմնովս:

Իսկ ո՞վ էր այն գնդապետը, որին ես «ժանդարմի» տեղ էի դրել: Թիֆլիսի նահանգի հրամանատար Կոնստանտին Ափխազը, Իլիա Մավանվաձեի քրոջ որդին, իր ժողովրդի հայտնի գործիչը:

Հովհաննես Թումանյանի կազմակերպած տոնահանդեսն Թումանյանի կազմակերպած տոն մեր սիրելի բանաստեղծ և գրականագետ

Իոսեք Գրիշաշվիլին Սայաթ-Նովայի մասին գրեց մի հրաշալի գիրք: Նմանապես՝ հետազոտություններ գրեցին մեր նշանավոր գիտնական Լ. Մելիքսեթ-Բեկը, շքանշանակիր բանաստեղծ Գոլյա Լեոնիձեն և ուրիշներ:

Այսքանով էլ չի սպառվում այդ օրվա նախաձեռնությունը. այդ օրը նետած սերմն այնքան խոր արմատներ ձգեց ժողովրդի սրտում և հոգում, որ նրա առատ բերքը սպասելի է թե՛ մեր ժամանակներում և թե՛ ապագայում...

Այդ առատ բերքը ի մի բերվեց Հովհաննես Թումանյանի կազմակերպած Սայաթ-Նովայի հուշարձանն օժելու արարողության ժամանակ...

## ԲԱՐԵԿԱՍՄ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՄ ՈՒՆԵԾԵԼ, ԻՍԿ ԵՄ ԱՆՏԵՂՅԱԿ

Առաջին համաշխարհային պատերազմի (1914—1918 թթ.) քարոզանալը ոռոսական ինքնակալության միապետ Նիկոլայ Երկրորդին, նրա հետ էլ բուրժուական լիբերալ մշտավորականությանն ստիպեց «գթության» աչքերով նայել այն ժողովուրդներին, որոնց մի ամբողջ դար ոչնչություն են համարել և կրուկզների տակ ճզվել:

Ինչ խոսք՝ հզոր Ռուսիայի նշանավոր մտավորականությունն իր շարքերում ուներ նաև այնպիսի անդամներ, որոնք չէին կիսում ինքնակալության նման վերաբերմունքը, բայց ձայնը խլանում էր թագավորի կամակատարների գվիլդների և շղթաների աղմուկների մեջ:

Պատերազմը թեժամալու տարիներին անհրաժեշտություն առաջացավ այս օտարագիներին, այսպես կոչված «հնորոդեցներին» սիրաշահել, հատկապես՝ հայերին ու վրացիներին, որոնք սահմանակից էին Թուրքիային և Պարսկաստանին:

Այդ նպատակով Ռուսաստանի լիբերալ գերողներն ու երեսփոխանները վրաստան և Հայաստան էին այցելում, որպեսզի մշակութային կապերն ամրապնդեն: Ավելի շուտ՝ գերմանները շոյեցին: Օրինակ՝ վրաստան եկավ երեսփոխան Ռեժակին (եթե ազգանունը չեմ շփոթում), որը ժողովրդական տանը վրացիների մասին ասաց. «Վրացիներն իրավունք ունեն պահանջելու 1864 թ. ինքնակալությունը, որը և պետք է տրվի անշուշտ»: Որան գրաքննադատ-հրապարակախոս Կիտա Աքաշիձեն պատասխանեց. «Եթե խոսքը վերաբերում է իրավունքին ու պահանջին, սպա վրաց ժողովուրդն ինքն ավելի լավ գիտե թե ինչ պետք է պահանջի...»:

Նույն ժամանակներում եկավ նաև բանաստեղծ Բայրամյանը, որը Շոթա Ռուսթավելուն երկինք հանեց, համեմատեց արևի հետ և հանձն ատավ թարգմանել այն (և թարգմանեց)...

Թիֆլիս եկավ հայտնի գրող-բանաստեղծ Վալերի Բրյուսովը, որը Ռուսթավելու թատ-

րոնի համերգային դահլիճում հայ քնարերգության երեկո անցկացրեց: Երեկոն բովանդակալից էր, և ոչ միայն մեզ՝ այլազգիներին, այլ նաև հենց իրենց՝ հայերին էլ շատ նոր քան առաջ հայ պոեզիայի մասին:

Երեկոյից հետո հենց այնտեղ տրվեց ճոխ ճաշկերույթ: Մասնակցեց գրեթե հարյուր ինքնուրուն տղամարդ և կին: Ես նույնպես բախտ ունեցա ներկա գտնվելու այդ ճաշկերույթին: Ծաշկերույթում սիրո սոխակներ էին թևածում...

Մի քանի կենացից հետո սեղանապետը նոր կենաց առաջարկեց.

— Ուշադրություն, գեղեցկագույն տիկնայք և ոչ պակաս համեստափայլ պարոնայք. պարզվում է, որ Թիֆլիս քաղաքում, ինչպես մեծարգո Վալերի Բրյուսովն է ասում, հայերս հրաշալի պոետ ենք ունեցել. մեղքս չեմ թաքցնում, քանզի առ այսօր ես դա չեմ նրկատել և չգիտեի: Ո՛չ էլ էն եմ իմացել, որ էդ հրաշալի պոետը իմ քարեկամն է... Դե՛, ինչպե՛ս եք ընդունում, հա՛, քարեկամ պոետ եմ ունեցել, բայց ես չեմ իմացել: Իհարկե՛, ոչ էլ դուք գիտեք՝ ում մասին է խոսքը...

— Հովհաննես Թումանյանի՛, Հովհաննես Թումանյանի՛,— լսվում էր այս ու այն կողմից:

— Այո՛, Հովհաննես Թումանյան, որին առայսօր չէիք տեսնում կամ չէիք ուզում տեսնել, մինչև որ պատարժան Վալերի Բրյուսովը մատնացուցց արեց...

— Խմե՛ճք Հովհաննես Թումանյանի...

Ոգևորված ներկաները թույլ չտվին թամաղան վերջացնի իր խոսքը: Մի մարդու նման քողորը ոտքի ելան, բոլորը գավաթները պարզեցին Հովհաննեսի կողմը, և «կեցցե՛», «վաշա՛», «քոսվո՛» բացականչությունները փոխանիփոխ բախվեցին առաստաղին...

Բոլոր ներկաները, անկախ ազգային պատկանելությունից, այդ պահի փառաբեղությունն զգում էին միանման զգացումով: Բոլորն ըզգում էին, որ այդ րոպեին իրենց կողքին է երկնային շնորհով օժտված մի մարդ, արտի հավատարմատար մի մեծ քանաստեղծ, որը շերմացնում է բոլորի հոգիները:

### ՎԵՆԱԶՆԻՎ ՄԱՐԿԵՆՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսական մեծ հեղափոխության առաջին ամիսներն էին, այն ժամանակները, երբ ռազմաճակատից թագավորական զորքերը հանում էին, ազգային շրկատներ էին կազմավորվում, և հայ ազգային ռազմական ասպարեզում երևան եկավ մի ժամանակ աղմուկ հանած Անդրանիկն իր շոխատով...

Անդրկովկասի կառավարչությունն, ազգային սկզբունքի համաձայն, Հայաստանի նախկին գավառները զիջեց հայկական միավորումներին, բայց միայն դրանով չբավարարվեց, ամհրաժեշտ էր հասարակական ուժերի օգ-

նությունը քնակչությանը՝ ազգերի միջև խաղաղություն պահպանելու համար:

Նման առաքելություն իրականացնելու համար գործուղվածներից մեկն էլ, կարծեմ, Հովհաննեսն էր:

Չափազանց վտանգավոր էր այդ անիշխանության ժամանակ որևէ տեղ գնալ. դու հավասար էր բոցավառվող կրակի մեջ նետվելուն:

Բայց Հովհաննեսը գնաց:

Եթե որևէ մեկին պիտ հաջողվեր վերացնել միմյանց միջև թշնամանքը և խաղաղություն հաստատել, ապա դա կրկին Թումանյանը կարող էր, իսկ նա ինչպե՛ս կընկրկեր: Բոլորս հավատում էիք, որ նա, իբրև ժողովուրդների միջև եղբայրության և միաբանության միջնորդ, մեծ մարդասեր, նշանավոր բանաստեղծ և հասարակական գործիչ, հայերին ու թուրքերին կհաշտեցներ...

Անցավ ժամանակ...

Մի անգամ գնում էի դեպի տոնավաճառը: Կիրակի էր: Ահագին մարդիկ էին գրոսնում: Ժողովրդի մեջ տեսա կորամեջք մեկին, որին այս ու այն կողմից շրջապատել էին տղաներ ու աղջիկներ:

Նմանեցնելով ծանոթիս՝ հենց թիկունքից կանչեցի.

— Հովհաննես՛ս, քարեկամ՛, Հովհաննես՛ս...

Տղամարդը երեսը շրջեց, իսկապես՝ նա էր...

Մտե՛նալով՝ զարմանքը պատեց ինձ. ասես սիրտը թունավորված լիներ, դեմքը ճեփճեմակ էր. մեր առջև ոչ թե սովորական ժպիտը դեմքին, առողջ, կենսադառն Հովհաննեսն էր, այլ, ասես, մեկ ուրիշը:

— Ի՞նչ է պատահել, Հովհաննես՛ս, ո՞նց եք:

— Ո՞նց կլինեմ կամ, որ էսպես եմ՝ չե՛ս զարմանում:

— Ի՞նչ է պատահել:

— Է՛ն, ի՞նչ չպիտի տեսնեի:

— Ի՞նչ տեսաք:

— Վերքերս... Սրտիս վերքերը մի քրքրի...

Ձախից փոխարինեցի ուղեկցին. ձեռքով բռնեցի սրմունքը:

— Այնուամենայնիվ՝ ի՞նչ է պատահել:

— Լեզվով ասելու՛ր բուն է, որ... Իսկական դժոխք... Մարդիկ զազազել են, ցոփացել... Մենք միշտ համոզված ենք եղել, որ թուրքերը վայրենի են, ուխտադրուժ չեն, անմարդկային ինչ էլ անեն՝ զարմանալի չէ մեզ համար, բայց երբ վայրենություն են անում մարդիկ, այն էլ՝ ուսանողները, այդ ժամանակ... Այդ ժամանակ չգիտեմ՝ ի՞նչ ասեմ...

— Ի՞նչ է պատահել, Հովհաննես՛ս:

— Այնտեղ էի, որտեղ հայերն ու թուրքերն ապրում են հարևանությամբ, ոմանք՝ նույնիսկ խառն... Դրանք բողի պատվավոր աշխատավորներ են, նաև՝ մախրապաններ, հովիվներ... Ի՞նչ ունեն իրար մեջ քաժանելու...

— Հետո՞:

— Սատանան բույն է որեւ նաւն արանց հոգում. սև կատու է անցել արանց արանքով... Կամրջի գլխին ես տեսա հայ ուսանողների պահապան մի ջոկատ... Տեսա, թե ինչպես մի հայ ուսանող խողխողեց թուրքին և կամրջից նետեց ջուրը...

— Դո՞ւք տեսաք:

— Սեփական աչքերով... Վա՛խ. երանի՛ աչքերս քոտանային, ու ես էր բանը չտեսնեի...

— Ինչ արած, բարեկա՛մ, նման պահերին մարդ երբեմն կորցնում է գլուխը...

— Ո՞նց թե՛ ի՞նչ արած, ոնց թե՛ կորցնում է գլուխը: Ուրեմն՝ մարդկայնություն՞ում էլ պիտի կորցնի...

Ձեռքով բռնել էի թևը. ասես կրծքին սեղմված լինեի. զգում էի. թե ինչպես է դողդողում, կկարծեիր ներսում կրակ է վառվում:

Նա գերզգայուն մարդ էր, որը լավն ու վատը, ուրախությունն ու անելությունն ընկաղում էր զարմանալիորեն նրբագոց կերպով:

Իմ առջև ասես կանգնած էր հավասարակշռությունը կորցրած մի մարդ, նկատեցի, որ փոքր-ինչ նիհարել է նույնիսկ. ուսերն ավելի կորացել էին, երեսը վարդագույնի փոխարեն մոխրագույն էր դարձել:

Այո՛, Հովհաննեսի սիրտը մղկտում էր ոչ միայն նրա համար, որ թուրքերը կոտորում էին հայերին, այլև սղն բանի համար, և զուցև սա ավելի շատ, որ հայ ուսանողները թուրքերին չէին ներում...

Առաջին հայացքից թվում է, թե այնպես էլ պետք է լիներ. ինչպես որ եղել է. սե՛ն դառնադետ ժամանակներում եթե թուրքերը կոտորում էին հայերին, ոչ էլ հայերը պետք է գիջեին, քայց Հովհաննեսն իբրև մեծ մարդ, մեծ հուժանիստ, հենց դրանում էր վայրենություն տեսնում:

Նրա սիրտը ցավում էր մարդկանց վայրագության պատճառով: Գուցե կեղծ, թթու հայրենաստեղները, ազգայնամուլները նույնիսկ պախարակեն նրան, ասելով, թե «երբ ուրիշը քեզ սպանում է, դու էլ պիտի սպանես», քայց բարձր իդեալների տեր մարդիկ նրան՝ Հովհաննես Թումանյանին, միշտ փառքով կրհիշեն նման հուժանիզմի համար...

### ԱՄՐՈՒՎԻ ԵՎ ՏԱՎԱԼԻ

Այլ անուն չես տա այն միջադեպին, որ տեղի ունեցավ 1918 թվականին հայերի և վրացիների միջև: Ով ում հաղթեց, ով ինչով սիրտի հաղթեր, ով էր արդար, ով՝ անարդար, այստեղ չեմ քննի: Միայն պետք է նշեմ ցավալի փաստը. հուրախություն թըշնամու՛ հենց մեր իսկ ընդհանուր թշնամու, կեղտոտ ձեռքի գործ էր կատարվածը:

Թիֆլիզը դողեղորքով էր բռնված: Բորչալու—Աանահին, Վորոնցովկա—Եկատերինոֆելդ

և ուրիշ վայրեր կրակի բոցերով էին պատված:

Պետք էր տեսնել, թե այդ օրերին Հովհաննեսն ինչպե՛ս էր լարված, պրկված: Ես տեսել եմ բոլոր կողմերից թշնամիներով շերտապատված հրամանատարի՝ դառնացած, որ անհրաժեշտ քանակությամբ փամփուշտ չունի. տեսել եմ փութազար վիճակում, որ որևէ կերպ կարողանա ազատվել թշնամուց, այդպես փութազար էր Հովհաննեսը, քայց ոչ թե տարված արյուն հեղելով, այլ հոգսի տակ կքած, թե ինչ ուղի գտնի, որպեսզի այս երկու հարևան ժողովուրդներին փրկի ամութալի և ցավալի պատահարից...

Նա իր հարկի տակ հաճախ հավաքում էր վրացի գրողներին և հասարակական գործիչներին, ինչպես նաև հայությամբ՝ այդ բոցկլտացող կրակը մարելու համար... Դերան հասնելու նպատակով նա ոչ մի բանի ստաց կանգ չէր առնում:

Ի միջի այլոց, իմ երկերից մեկի («Նուրացած կյանք» վեպի) առաջին գլուխն սկզբն էլ այդ տոնից, իրեն՝ Հովհաննեսին էլ դարձրել եմ վեպիս հերոսներից մեկի նախատիպը, որը վերջում դառնում է հայվրացական միաբանության խորհրդանշիչը:

Եղբայրների միջև արձակված գնդակը ավելի շատ Հովհաննեսի սրտին էր կաշտու և ծանր վերք բացում...

Որքան հիշում եմ՝ այդ ժամանակներում, թե փոքր-ինչ ուշ, Հովհաննեսի հորեղյանը նշմեց, քաջ տեղի ունեցած միջադեպից սիրտը նայնպես էր կոտրվել, որ հորեղյանական հանդիսությունն ընդունեց գրեթե առանց ոգևորության:

Ժամանակավորապես սուրը հաղթեց, թեև վերջնական հաղթանակը քնարը տոնեց...

### ԳՐՈՂՆԵՐԻ ԼԵՏ

Վրացական թատրոնում (այժմ Գրիբոլեդովի անվան) հայ գրողների (թե՛ բարեգործական ընկերության) երեկո էր՝ Հովհաննես Թումանյանի ղեկավարությամբ:

Ես էլ գնացի:

Ընտիր հասարակություն էր հավաքվել:

Նկատելուն պես Հովհաննեսն իսկույն ինձ հրավիրեց դահլիճի, անկյունում հատուկ բացված սուփրայի մոտ: Սեղանի մոտ ոչ ոք չուկար: Պարզվեց, որ այդ սեղանը հատուկ ընտրված հյուրերի համար են քացել:

— Որտե՛ղ են ձեր գրողները, ինչո՞ւ չեն երևում:— Ինձ հետ խոսելով՝ Հովհաննեսը ստեպ-ստեպ դրան կողմն էր նայում:— Ինչ ճիշտ է՝ ճիշտ, նրանց գալուն եմ սպասում: Հա՛րկ է, եղբա՛յր, հարկ է մեր գրականության և արվեստի բոլոր բնագավառների վարպետների սերտ կապը, իրար հասկանալը և մեկ ընդհանուր լեզվով խոսելը, որպեսզի ժողովուրդն էլ գիտակցի (ի՞նչ եմ սասում, ժողովուրդը մեզանից ավելի շուտ գիտի), որ



եղբայրներ պետք է լինենք: Անհրաժեշտ է, որ մեր հասարակության առաջամարտիկներին ի մի հավաքենք, այլապես մեր վերքերն անվերջ են...

Ջրուցում էր ու միևնույն ժամանակ այս ու այն կողմ աչք ածում, համոզվելու՝ պատրաստության մեջ որևէ բան հո թերի չի... Օտու-շուտ նայում էր նաև դռան կողմը... Հանկարծ վեր կացավ ու շարժվեց դեպի ելքը: Նայեցի տեսա, որ գրողների նոր խըմբակցության՝ «Երկնագույն եղջյուրականների» անդամներն են գալիս:

Հովհաննեսը բարեհամբույր ժպիտով դիմավորեց նրանց և առաջնորդեց իմ կողմը: Դահլիճի կենտրոնում «Երկնագույն եղջյուրականների» պարագլուխը հանկարծ կանգնեցրեց Հովհաննեսին և ինչ-որ բան ասաց: Ես ակնդետ նայում էի: Հովհաննեսը փոքրիկ մտայվեց: Մտածեցի՝ հավանաբար նրանց զարմացնում է իմ այստեղ գտնվելու հանգամանքը: Նրանք դրա համար «հիմք» ունեին. նրանց իբրև թե նոր գրելածն ու ոմանց ամբարտավանությունն ինձ դուր չէր գալիս: Իմ ամապրերում նրանց ձաղկող հոգված էի տպագրել:

Այնուամենայնիվ՝ մտտեցան: Ողջունեցինք իրար:

Ջրուցի ժամանակ որոշեցինք, որ անհրաժեշտ է հայ և վրաց գրականության ընտիր երկերը թարգմանել:

Մաշկերույթն սկսվեց: Գավաթները դատարկվում էին պոեզիայի փառաբանությամբ: Քիչ անց ոտքի ելա և հրաժեշտ տվեցի: Հովհաննեսը կանգնեցրեց ինձ...

— Ո՛ր ես գնում:

— Ասելիքն ասվեց, գինու հետ էլ մտերիմ չեմ...

— Ի՞նչ մի խմողն էլ ես եմ:

— Անհետաձգելի գործ ունեմ,— պատասխանեցի ու շարժվեցի դեպի ելքը:

Հովհաննեսն ուղեկեց մինչև դուռը:

— Ինձ դուր չի գալիս, Իոսեք ջան, ինձ դուր չի գալիս էդպիսի բանը: Գրականությունը հո մի ընտանիք է, գրողները, ինչ հավատամքի էլ որ լինեն, էդ տանը հավասար են: Մենք բոլորս մի գործ ենք կատարում, մի նպատակի ենք ծառայում՝ ժողովրդի բարօրության գործին. ի՞նչ կարիք կա իրար հետ գծովելու...

— Մի՞թե ես գծովել եմ որևէ մեկի հետ կամ ասել եմ նման բան...

— Չէ՛, չես ասել, բայց գիտեմ:

Հրաժեշտ տվեցի ու դուրս ելա:

Այո՛, գրականությունը նրա համար տակ մպատակ չէր, այլ սիրուն, ճշմարտությանը և ժողովրդին ծառայելու միջոց:

Նրա գեղարվեստական բարձրարժեք ամբողջ ստեղծագործությունը ծառայել և ծառայում է այդ գաղափարին՝ սիրուն, ճշմարտությանը, ժողովրդի դաստիարակությանն ու նրան լավագույն ապագայի մղելուն:

Գրողից, բացի գրչով ծառայելուց, նա պահանջում էր նաև լինել գիտակից, բարձր քաղաքացի...

Հենց դրանից հետո սկսեցի Հովհաննեսի «Անուշի» թարգմանությունը, բայց քանի որ այդ գործը ձեռնարկեց Իոսեք Գրիշաշվիլին, ես թողեցի այն:

## ԺՈՂՈՎՈՒԲՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Թումանյանին ես չեմ կարող պատկերացնել այլ կերպ, եթե ոչ իբրև ժողովուրդների բարեկամության մեծագույն միջնորդ, անբասիր գործիչ: Նրա յուրաքանչյուր տողը, նրա յուրաքանչյուր երկը «Անուշից», «Շունն ու կատուն» լեզենդից սկսած մինչև վրաց գրողներին նվիրված բանաստեղծությունը այս գաղափարի ամենավորումն է, այս երկնային ձգտումների խորհրդանիշը...

Սույնը հաստատելու համար վերը մի քանի օրինակ բերեցի:

Այս ամենից բացի Հովհաննես Թումանյանը ինքնատիպ և յուրօրինակ մարդ էր:

Թիֆլիսը սիրում է ժամանակ առ ժամանակ ինքնատիպ խառնվածքի տեր մարդկանց ի հայտ բերել: Օրինակ, այդպիսիք էին Իլյա Շավճավաճեն, Ակակի Ծերեթելին, Գաբրիել Սունդուկյանը, Վասիլ Բարնովը և ուրիշներ, առանց որոնց Թիֆլիսը երկար, շա՛տ երկար ժամանակ ինչ-որ պակասություն է ըզգում, այսինքն՝ նրանց գնալով քաղաքը, ասես, դատարկվեց, և բոլորն են զգում նրանց հեռանալը. վաղուց չենք տեսնում փողի նրան ծանրաքայլ, հոգսերից միշտ մտասույզ Իլիային. գլուխը դեպի երկինք բարձրացրած, ծպտերես, արևային Ակակիին, կամփկական ոչխարենուց երկնագույն գլխարկով Գաբրիելին, որն իր բնակավայրից՝ Լեռնանուվի փողոցի մի կողմով, հետիտն գրտանք էր կատարում դեպի Մուշտաին, մյուս կողմով, դարձյալ հետիտն, վերադառնում. կամ Վաստյին՝ նման քարոզչի, որմնակարային դեմքով, որը ցերեկվա ժամը 12-ին Ռուսավելու պողոտայի ձախ կողմով իջնում էր, իսկ աչից դառնում տուն՝ սեփական, այլոց համար անտեսանելի հերոսների սխրանքներով տարված...

Միշտ այսպես ինքնատիպ էր նաև Հովհաննես Թումանյանը. առաքինի, շարժուն, քարեարտության տիպար, որ հաճելի լուր լսելիս ծպտում էր, ցավալի լուր լսելիս՝ մոռացվում... Երկար ժամանակ է՝ նրա բացակայությունը քրքրում է թիֆլիսցիների հոգին...

Ինքնատիպ էր նաև բանաստեղծ Կարա Դարվիշը:

Հովհաննեսն իր ամբողջ էությանը սիրում էր վրաստանը, նրա սիրտը՝ Թիֆլիսը և, առհասարակ, վրացիությանը: Նրա երկերը կախարդ Սոսո Գրիշաշվիլու շնորհիվ մատչելի դարձան ամեն մի վրացու... Նրա «Մի կաթիլ մաղրը», որ հենց ինքը՝ Սոսո Գրի-

չաշվի՞ին կրակված կարդում էր բեմից, միշտ  
բարձր զգացմունքների խաբույկ է բոցավա-  
ռում...

Հովհաննեսը սիրում էր Վրաստանը, և  
Վրաստանն էլ սիրում էր նրան, ինչպես իր  
մյուս հարազատ ու երախտավոր որդիներին:  
Դրա համար էլ նա խաղաղ հանգչում է

Վրաստան երկրի Ռոդում՝ Քիֆլիսում:

Հանգչի՞ր խաղաղ, երկրի առաջ պարտքդ  
մարած սիրելի՛ բանաստեղծ և թանկագին  
բարեկամ՝ Հովհաննես...

1841 թ., 16 հունիսի  
ք. Քիֆլիս

**Г. С. БАЙРАМЯН — В переплетении духовных связей.**— Со второй по-  
ловины 19-го века грузинская литературно-критическая мысль перио-  
дически обращалась к жизни и деятельности представителей армян-  
ской классической и современной литературы. В публикации представ-  
ляются главы из воспоминаний грузинского литературного и общест-  
венного деятеля Иосифа Имедашвили об Ованесе Туманяне.